ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՏԿԱՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0001 ք. Երևան, Մոսկովյան 1 փող. հեռ./ֆաքս 56-70-63

№ 7-ՀԿԳ-15

«29» 09 2015 թ.

Թիվ 18100115 քրեական գործով տուժողի
իրավահաջորդի ներկայացուցիչներ
Արթուր Սաքունցին և Արայիկ Զալյանին

ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

Ի պատասխան ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում 15.09.2015թ-ին ստացված Ձեր միջնորդության, ուղարկում եմ միջնորդությունն ամբողջությամբ մերժելու մասին որոշումը:

Առդիր՝ որոշումը «2» թերթից:

ՀԿԳ ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝ Գ. Ս. ԱՂԱԲԱԲՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թիվ 18100115 քրեական գործով տուժողի իրավահաջորդ Անդրանիկ Պողոսյանի ներկայացուցիչներ Ա. Սաքունցի և Ա. Զալյանի միջնորդությունն ամբողջությամբ մերժելու մասին

« 19 » սեպտեմբերի 2015թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Գ. Ս. Աղաբաբյանս, քննարկելով վարույթիս թիվ 18100115 քրեական գործով տուժողի իրավահաջորդ Անդրանիկ Պողոսյանի ներկայացուցիչներ Ա. Սաքունցի և Ա. Զալյանի միջնորդությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննվող թիվ 18100115 քրեական գործով տուժողի իրավահաջորդ Անդրանիկ Պողոսյանի ներկայացուցիչներ Ա. Սաքունցն ու Ա. Զալյանը 2015թ. սեպտեմբերի 15-ին միջնորդություն են ներկայացրել հետևյալ բովանդակությամբ.

Խնդրել են տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե՝

1. ինչ կարգով և ինչ իրավական ակտով է ՌԴ քննչական կոմիտեից ՀՀ քննչական կոմիտե փոխանցվել քրեական գործի նյութերը:

2. տրամադրել ՌԴ քննչական կոմիտեից ՀՀ քննչական կոմիտե փոխանցված քրեական գործի նյութերը, ուղեկցող գրության կամ որոշման պատճեն:

3. ինչ իրավական ակտի հիման վրա է փոխանցված քրեական գործի նյութերը միացվել վարույթում քննվող թիվ 18100115 քրեական գործին:

4. տրամադրել ՌԴ քննչական կոմիտեից փոխանցված քրեական գործի նյութերը թիվ 18100115 քրեական գործին միացնելու վերաբերյալ իրավական ակտի պատճեն:

Միջնորդությունը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Տուժողի իրավահաջորդ է ճանաչվում նրա մերձավոր ազգականներից մեկը, որը ցանկություն է հայտնել քրեական գործով վարույթում իրականացնել մահացած (...) տուժողի իրավունքները և պարտականությունները»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Տուժողի իրավահաջորդը քրեական գործով վարույթին մասնակցում է տուժողի փոխարեն և ունի վերջինիս իրավունքները և պարտականությունները, (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ, 79-րդ հոդվածների համաձայն՝ տուժողը, տուժողի ներկայացուցիչը իրավունք իրավունք ունի ծանոթանալ առաջադրված

մեղադրանքին, ծանոթանալ քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել է և դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, քննչական և այլ դատավարական գործողությանը մասնակցելու, դատարանի նիստին ներկա գտնվելու դեպքում պահանջել նշված գործողության կամ դատարանի նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք իր կարծիքով, պետք է նշվեն, ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը և ներկայացնել դրա մասին իր դիտողությունները, նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություն, իր խնդրանքով անվճար ստանալ քրեական գործը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումների պատճենները, մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ որոշման պատճենը, ինչպես նաև դատավճռի կամ դատարանի՝ այլ վերջնական որոշման պատճենը:

Հայտնելով վերոգրյալը վարույթն իրականացնող մարմինը պարզաբանում է, որ Ձեր պահանջած փաստաթղթերը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն տուժողի իրավահաջորդին կամ ներկայացուցչին տրամադրվող փաստաթղթերի ցանկի մեջ չեն մտնում, նախաքննության տվյալ փուլում տրամադրման ենթակա չեն, տուժողի իրավահաջորդին կամ նրա ներկայացուցչին նման տեղեկատվություն տրամադրելու ընթացակարգ սահմանված չէ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով Դուք ծանոթացել եք ՌԴ քննչական կոմիտեից ստացված քրեական գործով նշանակված փորձաքննությունների որոշումներին և եզրակացություններին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ, 199-րդ և 267-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 18100115 քրեական գործով տուժողի իրավահաջորդ Անդրանիկ Պողոսյանի ներկայացուցիչներ Ա. Սաքունցի և Ա. Զալյանի միջնորդությունն ամբողջությամբ մերժել՝ վերը նշված պատճառաբանությամբ:

2. Որոշման օրինակն ուղարկել տուժողի իրավահաջորդ Անդրանիկ Պողոսյանի ներկայացուցիչներ Ա. Սաքունցին և Ա. Զալյանին:

ՀԿԳ ավագ քննիչ՝ Գ. Ս. Աղաբաբյան